ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների ՀՀ Արմավիրի մարզի Ջրառատ համայնքում ծանրամարտի մարզադահլիճի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/27 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2020 թվականի հոկտեմբերի 7-ին կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/27 պայմանագրում 2020 թվականի դեկտեմբերի 25-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

1) Փոփոխության առաջացման պատճառ	ՀՀ կառավարության 08.12.2020թ. N 1988-Ն որոշում:
Փոփոխության նկարագրություն	N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/27 պայմանագրում և վճարման ժամանակացույցում կատարվել է 2020թ. համար հատկացված ֆինանսական միջոցների նվազեցում:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 7.5 կետ:
2) Փոփոխության առաջացման պատճառ	Պայմանագրի հետագա կատարումն ապահովելու համար համապատասխան պայմանագրային դրույթի սահմանում:
Փոփոխության նկարագրություն	Պայմանագրի 7.12 կետից հետո լրացվել է նոր 7.13 կետ:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 7.5 կետ:
3) Փոփոխության առաջացման պատճառ	Կատարողի առաջարկության և պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված եզրակացության հիման վրա աշխատանքների կատարման վերջնաժամկետի երկարաձգում
Փոփոխության նկարագրություն	ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/27 պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման նոր ժամկետի սահմանում
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 7.5 և 7.6 կետեր:

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

07.10.2020թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/27 գնման պայմանագրի

ք. Երևան <<25>> դեկտեմբերի 2020 թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Վոլիոս նախագծային ինստիտուտ>> ՓԲԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Ա. Շահինյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 8-ի N 1988-Ն որոշումը և ՀՀ Արմավիրի մարզի Ջրառատ համայնքում ծանրամարտի մարզադահլիճի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 07.10.2020թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/27 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.6 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

ա) Պայմանագրի 4.1 կետը լրացնել նոր 4.1.2 ենթակետով՝ հետևյալ խմբագրությամբ.

<<4.1.2 2020 թվականի համար վճարման ենթակա գումարը կազմում է 1 288 300 (մեկ միլիոն երկու հարյուր ութսունութ հազար երեք հարյուր) ՀՀ դրամ:>>,

բ) Պայմանագրի 7.12 կետից հետո լրացնել նոր 7.13 կետը՝ հետևյալ խմբագրությամբ.

<<7.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:>>,

գ) Պայմանագրի N 1 հավելվածում աշխատանքների կատարման ժամկետին վերաբերող բոլոր տեղերում <<91>> թիվը փոխարինել <<121>> թվով,

դ) Պայմանագրի N 1.1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի N 1,

ե) Պայմանագրի N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի N 2 հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Համաձայնագրի N 1 հավելվածը բաղկացած է 2 (երկու) էջից, N 2 հավելվածը՝ 1 (մեկ) էջից, որոնք համարվում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011034379
ՀՎՀՀ 02565827

ԿԱՏԱՐՈՂ՝

<<Վոլիոս նախագծային ինստիտուտ>> ՓԲԸ
ք. Երևան, Խորենացի փող. 33, 6-րդ հարկ,
գրասենյակ 24
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 11500906906969
ՀՎՀՀ 00902375

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն) Կ.Տ.

Տնօրեն՝

_____ Ա. Շահինյան
(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
07.10.2020թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/27 պայմանագրի
25.12.2020թ. կնքված N1 համաձայնագրի

<<Հավելված N 1.1
07.10.2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/27 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՀՀ Արմավիրի մարզի Ջրառատ համայնքում ծանրամարտի մարզադահլիճի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման

Հ.հ	ՆՆՓ մշակման աշխատանքի գործընթացները և փուլերը	Շաբաթների քանակը (ընդամենը 121 օրացուցային օր)																	
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
1	Ելակետային նյութերի հավաքագրում																		
2	Հողատարածքների գեոդեզիական աշխատանքների իրականացում և հանույթների պատրաստում																		
3	Նախագծման առաջադրանքի հիման վրա շենքերի ծավալահատակագծային մանրամասն լուծումների իրականացում և համաձայնեցում պատվիրատուի հետ, այդ թվում շինությունների եռաչափ մոդելավորումը																		
4	Համաձայնեցված հատակագծային լուծումների հիման վրա ՃՀԱ ստանալու դիմումի համար անհրաժեշտ ԷՍՔԻԶԱՅԻՆ առաջարկի նյութերի լրակազմի պատրաստում՝ ներառյալ էլեկտրամատակարարման, ջրամատակարարման, գազամատակարարման, հրդեհաշիջման և կոյուղու հաշվարկային հզորությունների տրամադրում																		
5	Անհրաժեշտության դեպքում ստացված ՃՀԱ-ին ճարտարապետաշինարարական լուծումների համապատասխանեցում																		
6	Ներքին ինժեներական ենթակառուցվածքների նախագծային լուծումների մշակում և համաձայնեցում պատվիրատուի հետ																		

7	Արտաքին ինժեներական ենթակառուցվածքների մշակում ստացված տեխնիկական պայմանների հիման վրա և համաձայնեցում պատվիրատուի հետ																			
8	Աշխատանքային նախագծի լրակազմի մշակում և համաձայնեցում պատվիրատուի հետ՝ ներառյալ շինարարության կազմակերպման նախագիծը																			
9	Նախագծի լրակազմի քաղաքաշինական փորձաքննության իրականացում և դրական եզրակացության ստացում																			
10	Մշակված նախագծի հիման վրա նախահաշվի կազմում																			
11	Համաձայնեցում շահագրգիռ մարմինների հետ և անհրաժեշտ եզրակացությունների ստացում																			

>>:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011034379
ՀՎՀՀ 02565827

ԿԱՏԱՐՈՂ՝
<<Վոլիոս նախագծային ինստիտուտ>> ՓԲԸ
ք. Երևան, Խորենացի փող. 33, 6-րդ հարկ,
գրասենյակ 24
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 11500906906969
ՀՎՀՀ 00902375

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Տնօրեն՝

_____ Ա. Շահինյան
(ստորագրություն)

Հավելված N 2
07.10.2020թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/27 պայմանագրի
25 .12.2020թ. կնքված N1 համաձայնագրի

<<Հավելված N 2
07.10.2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/27 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
ՀՀ Արմավիրի մարզի Ջրառատ համայնքում ծանրամարտի մարզադահլիճի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/96	ՀՀ Արմավիրի մարզի Ջրառատ համայնքում ծանրամարտի մարզադահլիճի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ	-	-	-	-	-	-	-	-	-	1 288 300	1 288 300	1 288 300	1 288 300

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով: >>:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011034379
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝
Ա. Մնրոյան
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ՝
<<Վոլիոս նախագծային ինստիտուտ>> ՓԲԸ
ք. Երևան, Խորենացի փող. 33, 6-րդ հարկ,
գրասենյակ 24
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 11500906906969
ՀՎՀՀ 00902375
Տնօրեն՝
Ա. Շահինյան
(ստորագրություն)
Կ.Տ.